Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 126 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 289-Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂՑԿԵՂ ԵՎ ԱՐՅԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է անհատույց կերպով աջակցել քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող, Հայաստանի Հանրապետությունում բուժվող մինչև 25 տարեկան ֆիզիկական անձանց:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ քաղ. Երևան, Ներսիսյան 7, հեռախոսահամարներ՝ 00 374 91 403 927, 00 374 10 283 800, e-mail՝ info@cityofsmile.org, ՀՎՀՀ՝ 00464744)
4.	Ծրագիրը կատարողը	«Սիթի օֆ սմայլ բարեգործական հիմնադրամ (հասցե՝ քաղ. Երևան, Ներսիսյան 7, հեռախոսահամարներ՝ 00 374 91 403 927, 00 374 10 283 800, e-mail՝ info@cityofsmile.org, ՀՎՀՀ՝ 00464744)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Ներսիսյան 7, բնագավառը՝ առողջապահական:
6.	Ծրագրի բյուջեն	137,660,771 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող մինչև 25 տարեկան Հայաստանի Հանրապետությունում բուժվող ֆիզիկական անձինք, ովքեր հանդիսանում են «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի շահառուներ, որոնք չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց բուժման ծախսերը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել անհատույց դեղորայքային աջակցության միջոցառումներ քաղցկեղ և արյան հիվանդություններ ունեցող, Հայաստանի Հանրապետությունում բուժվող մինչև 25 տարեկան ֆիզիկական անձանց: Միջոցառումների արժեքը կազմում է՝ 129,027,438 դրամ:

		2. 2023 թվականի ապրիլի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում նախատեսվում են ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր՝ հաշվապահական հաշվառման, ինկասացիոն և աուդիտորական ծառայություններ: Կազմակերպական ծախսերի արժեքը կազմում է՝ 8,633,333 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Դեղորայքի ձեռքբերում՝ 129,027,438 դրամ: 2. Հաշվապահական հաշվառման ծառայությունների ձեռքբերում՝ 6,300,000 դրամ: 3. Ինկասացիոն ծառայությունների ձեռքբերում՝ 1,183,333 դրամ: 4. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 1,150,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1. Հաշվապահական հաշվառման ծառայությունների ձեռքբերում՝ 6,300,000 դրամ: 2. Ինկասացիոն ծառայությունների ձեռքբերում՝ 1,183,333 դրամ: 3. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 1,150,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Առողջապահության նախարարության և Առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1. Ծրագրի նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է «Սիթի օֆ սմայլ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: 2. Հիմնադրամն անցնում է տարեկան ֆինանսական աուդիտ, որի արդյունքները հրապարակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: 3. Յուրաքանչյուր եռամսյակ հիմնադրամի կայքում հրապարակվում է հիմնադրամի ծախսերի մանրամասն հաշվետվություն: 4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

20.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ